Մանչուրիական ռազմավայրին գործողութիւններուն։ Երկու նաւատորմիղներուն միջեւ ծովային պատերազմ մը համար վճռական հարուած մը անհրաժեշտ է։ Ասկէց առաջ քննելինք մէկ կողմէն Վլատիվոսթոքի կարեւորութիւնը իբրեւ գործողութեանց խարիսխ ...

...

Ռուսիա գոցեց իր նախարդ զինուորակից եզերքներուն վրայ գէշ չի խօսիր։

...

յաջողեցաւ կարեւոր տեղեկութիւններ բերել թշնամիին կազմակերպութեան վրայ, և այս տեղեկութիւնները խիստ օգտակար պիտի ըլլան յառաջիկայ ճակատամարտին։ Միցուտայի անունն ալ արձանագրուեցաւ ցանկին մէջ ա՛յն սակաւաթիւներուն, որոնց ազնուականութեան պատիւ պիտի տրուի այս։

...

հարիւրին 100, իսկ արտասահմանէն եկած ճարպին տուրքերը 71%։ Մէն մի փութ նաւթի արտադրութեան տուրքին վրայ պիտի աւելնայ 60 կոպէկ։

## ՆԱՄԱԿ ԹՈՒՔԻՈՅԷՆ

Թղթակցութիւն «Նայէ Ֆրայէ Բրէսէ»ի

(Ճապոնական գրեոյկ մը Ռուսիոյ վրայ.— Ռուս գերիներուն վարմունքը.— Անճիշդ եզրակացութիւններ.— Լուրեր Ճահոյի կուռյն վրայ.)

ԹՈՔԻՕ, 29 Յնվ.

Ճապոնական թերթերը լեցուն են մանրամասնութիւններով Ռուսիոյ ներքին տնտեսական կացութեան վրայ, և ամէն օր տիտղոսներ կը լեցուին սա՛ մասին թէ այդ տնտեսական կացութիւնը ի՛նչ ազդեցութիւն կրնայ ընել Պատերազմին վրայ։ Ընդհանուր տըպաւորութիւնը ա՛յն է թէ այդպիսի տնտեսական կացութիւն մը չի կրնար երկար տեւել և կարգադրութիւն մը անհրաժեշտ է։ Այս առթիւ նշանակութեան արժանի է Ճապոնցի Տր. Քոթօ Հիօօեուքիի հրատարակած տետրակը, ...

...

մինչեւ հիմակուան յաղթութեանց պըտուղը ապահովել Հաշտութեան ընդունելի պայմաններու միջոցաւ։

## ՊԱՏԵՐԱԶՄԸ

### ՌՈՒՍԻՈՅ ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ԴՐԱՄԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Պէրլինէր Թակէպլաթի Բեթերսպուրկի թղթակիցը հետեւեալը կը գրէ մարտ 27 թուով.— Խօսակցութիւն մը ունեցայ ելմտական Նախարար Քօքօվցէվի հետ Ռուսիոյ ելմտական կացութեան վրայ։ Նախարարը հետեւեալը ըսաւ.— «Արտասահմանի մամլոյն մէջ տարածկոյս կը յայտնուի թէ Ռուսիա ներկայ դրամական դժուարութեան պատճառաւ պիտի չկրնայ պատերազմը շարունակել։ Պատերազմի կամ հաշտութեան խնդրոյն վրայ չեմ կրնար բան մը ըսել։ Այդ մասին որոշումը Վեհ. Կայ...

...

### ՌՈՒՍԻՈՅ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

Բարիզի թերթերը կը յայտարարեն թէ արտաքին գործոց Նախարար Մ. Տէլքասէ շատ աշխատեր է յաջողելու համար ռուսական նոր փոխառութիւն մը. մի՛նչ վարչապետ Ռուվիէ և միւս Նախարարները ընդդիմացեր են, յայտարարելով թէ Ռուսիան հաշտութեան յորդորելու միակ միջոցն է դրամ գտնելու խնդիրը դժուարացնել. և այս կերպով Ֆրանսա աւելի մեծ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլայ Ռուսիոյ։

### ՊԱՊԻՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ.—

Պապը Կարտինալներու վերջին ժողովին մէջ հետեւեալ բանախօսութիւնը ըրաւ.— «Արդէն ուրիշ անգամ այս ժողովին առջեւ խօսեցայ թէ Ֆրանսայի մէջ կաթոլիկ կրօնքին հակառակ շարժումներ կ'ըլլան։ Բայց մեր ...

... բոլոր հոգիով կը սիրենք Ֆրանսացի ժողովուրդը։ Բայց ո՛չ միայն Ֆրանսացի կաթոլիկներուն անախորժ պիտի գայ այս իրողութիւնը, այլ նոյն իսկ բաժանման կուսակիցները օր մը պիտի զղջան իրենց ըրածին վրայ։

«Մեր սիրտը խիստ ղգածուած է նաեւ ա՛յն ահաւոր Պատերազմին համար որ երկար ատենէ ի վեր կը մոլեգնի Ծ. Արեւելքի մէջ, և ա՛յնքան մահերու և աղէտներու դուռ կը բանայ։ Իբրեւ Յիսուսի Քրիստոսի փոխանորդը այս աշխարհին վրայ ի սրտէ կ'աղօթենք որ Աստուած քաղցրութիւն պարգեւէ երկու պատերազմիկ Տէրութիւններուն։ Մարդկութեան բարոյական և տնտեսական վնասերը արդէն բազմաթիւ են և մեծ, և հարկ չկայ որ աւելի ծանրանան Պատերազմին անգթութեամբ։»

Յետոյ Պապը գոհունակութիւն յայտնեց որ Պրազիլիա, Բերու, և Պոլիվիա իրենց սահմանակցական վէճերը յանձնած են իրաւարարական ատեանի մը, նախագահութեամբ Պապին։

Պապը յետոյ Սուրբ Կոյսին բարեխօսութիւնը հայցեց բովանդակ աշխարհի համար։

ԿՈՎԿԱՍ.— Փետր. 24ին Ներքին գործոց Նախարար Մ. Պուլիկին իր քով հրաւիրելով Կովկասի նոր Փոխարքայ Վորոնցով-Տաշքով իշխանը, երկար խորհրդակցութիւն մը ունեցաւ։

*** Կայսերական պալատի աւագանիէն՝ Տփղիսի նախկին դաւառապետ իշխան Շիրվաշիձէ Տփղիս կուգայ վերստին, նոր Փոխարքային քով կարեւոր պաշտօն ստանձնած ըլլալով, իբրեւ Փոխարքայութեան քաղաքային ...

...

ռավարիչ մը։

*** Քութայիսի նահանգական ազնուականութեան պետ և նախագահ Վրացի իշխան Ս. Կ. Ծերեթելի 10 յօդուածէ բաղկացած յիշատակագիր մը մատուցեր է Ներքին գործոց նախարարին, Վրացիներուն եկեղեցական, կրթական և հողային խնդրոց կարգադրման համար, ըստ Կայսերական նոր հրամանագրի։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԱՏԵՐԱԶՄ

ԹՈՔԻՕ, 30 Մարտ.— Մուգտէնի ճակատամարտին մէջ գերի ինկած 65 հազար Ռուսեր հասան Ճապոն։ Ճակատամարտէն վերջ 18 000 Ռուս գերիներ փախան, անկարգութենէն օգուտ քաղելով։ Կը կարծուի թէ Ռուս գերիներու գումարը 86 հազար հոգիի կը հասնի։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ.— «Նովոյէ Վրէմիա» Կունշուլինէ հեռագիր մը կ'ստանայ թէ Ռուսք երէկ պարպեցին Շօմկոցէն (?)։ Ճապոնցիք կամաց կամաց ...

...

